ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Ավետիսյան Ս., Ավետիսյան Ա. (2024), Հայաստանում տավարի մսի շուկան և խոշոր եղջերավոր անասունների սպանդի կազմակերպատնտեսական խնդիրները, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2(5),* 106-119, DOI: 10.52174/29538114_2024.2-106
Ներկայացվել է խմբագրություն՝ 05.06.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 14.06.2024 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 18.11.2024 թ.

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0002-3019-4075

ԱՇՈՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
https://orcid.org/0000-0001-7480-5328

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՎԱՐԻ ՄՍԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման հիմնախնդիրներից մեկը տավարի մսի շուկայի կանոնակարգումն է: Դա դժվարանում է մի շարք պատճառներով: Նախ՝ դեռևս հիմնովին չի լուծվել կենդանիների հաշվառման և համարակալման խնդիրը, որը կարևորվում է խոշոր եղջերավոր անասունների (ԽԵԱ) հոտի վերարտադրության, անասնաբուժասանիտարական միջոցառումների և տոհմային գործի կազմակերպման համար: Իսկ դրանք շատ կարևոր են տավարի մսի իրացման ժամանակ սննդամթերքի անվտանգության կանոնների պահպանման համար: Այս խնդիրն ավելի հրատապ է դարձել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, որի համաձայն՝ 2023 թ. դեկտեմբերի 6-ից պետական վերահսկողության ընթացքում ոչ սպանդանոցային մորթի արդյունքում

ստացված կենդանական ծագման հումք և մթերք հայտնաբերելու դեպքում կասեցվելու է ամբողջ խմբաքանակի իրացումը, միաժամանակ կայացվելու է խմբաքանակի առգրավման և ոչնչացման որոշում: Վերջինս լուրջ դժվարություններ է ստեղծել արտադրողների և վաճառողների համար, քանի որ էական խոչընդոտներ կան օրենքի իրականացման առումով: Այս հիմնախնդիրը պայմանավորված է նաև «արտադրող-սպառող» համակարգի կազմակերպատնտեսական հարաբերությունների անկատարությամբ: Ուստի, առաջարկվում է անհատ անասնապահների և մսավաճառների միջև նախապատվությունը տալ մթերման, բտման և սպանդի գործառույթներ կատարող միջանկյալ օղակին:

Սույն հոդվածում բացահայտվում են ՀՀ-ում տավարի մսի իրացման դժվարությունները, միջազգային փորձի և տեղական առաջավոր տնտեսությունների օրինակով ներկայացվում են առկա հիմնախնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Հիմնաբառեր. *սննդամթերքի անվտանգություն, սպանդ, տավարի միս, շուկա, օրենք, վաճառք, կանոնակարգում*
JEL: Q13, Q18, L66
DOI: 10.52174/29538114_2024.2-106

Ներածություն: Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքների իրացման գործընթացը տարբեր արտադրատեսակների համար ունի լուրջ առանձնահատկություններ: Ահավասիկ, զանգվածային բերքահավաքի շրջանում դժվարանում է խաղողի, պտղի, բանջարեղենի և հացահատիկի իրացումը: Որպես կանոն, մթերող կազմակերպությունները, նկատի ունենալով այս արտադրանքների իրացման սահմանափակ հնարավորությունները, թելադրում են բավականին ցածր գնման գին, որը չի ապահովում գյուղատնտեսական արտադրողների համար ընդունելի եկամտաբերություն: Սեզոնայնության գործոնն ազդում է նաև խոշոր եղջերավոր անասունների իրացման գնի վրա: Որպես կանոն, իրացման գինը բարձր է արոտային շրջանում, իսկ մսուրային շրջանում համեմատաբար ցածր է: Այդուհանդերձ, մսի իրացման գործընթացն ավելի կառավարելի է, քանի որ արտադրողից մինչև սպառող ճանապարհի յուրաքանչյուր հանգրվանում կարող են կիրառվել նորարարական տեխնոլոգիաներ և վերահսկել իրացման ժամանակահատվածը: Հատկապես խոշոր եղջերավոր անասունների (ԽԵԱ) թարմ մսի իրացման գործընթացն ունի որոշակի առողջապահական, տնտեսական և կազմակերպական առանձնահատկություններ, որոնք ավելի հիմնավոր կարող են կարգավորվել սպանդանոցային մորթի կազմակերպման շնորհիվ: Թեև անվիճելիորեն առողջարար ու քաղաքակիրթ է սպանդանոցային մորթի միջոցով գյուղատնտեսական կենդանիների մսի իրացումը, սակայն ՀՀ-ում ձևավորված շուրջ 340 հազար ընտանեկան գյուղացիական տնտեսությունների պայմաններում դա հանգեցնում է որոշակի դժվարությունների, և արտադրողները փորձում են խուսափել մասնագիտացված սպանդանոցում մորթն իրականացնելուց: Այսպիսի գործելաոճն ունի մի շարք հիմնավոր պատճառներ, որոնց հաղթահարումը խիստ կարևոր է: Ուստի, սույն հոդվածում «արտադրող-սպառող» շղթայում առավելապես շեշտադրվում է մթերող, բտող և սպանդ իրականացնող միջանկյալ օղակի միջոցով զուտ կազմակերպատնտեսական գործիքներով սննդամթերքի անվտանգության և մսի քաղաքակիրթ իրացման հիմնախնդրի լուծումը:

Մսի շուկայի, հատկապես սննդամթերքի անվտանգության պահանջների գնահատման համար առանձնահատուկ կարևորություն ունի սպառողների վարքագծի ուսումնասիրությունը: Այդ նպատակով ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի շահառուների շրջանում և առցանց հարցումների միասնական հարթակի կառուցակարգերով անցկացվել է հարցում, որի արդյունքները վկայում են սպառողների շրջանում սպանդանոցային մորթի նկատմամբ դեռևս ոչ բավարար պահանջկոտություն դրսևորելու մասին: Մինչդեռ, տեսչական մարմինը չի կարող ապահովել սննդամթերքի անվտանգության պարտադիր պահանջները, եթե դրանում պատշաճ շահագրգռվածություն չեն ցուցաբերում սպառողները:

Սույն հոդվածում լուսաբանվում են ԽԵԱ-ի մսի շուկայի վիճակը, մսի իրացման լավագույն փորձը, բացահայտվում են ՀՀ-ում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման առավել մատչելի ու արդյունավետ միջոցները:

Գրականության ակնարկ: Գյուղատնտեսական արտադրանքի շուկայահանման և սննդամթերքի անվտանգության խնդիրները լուսաբանվում են ԵԱՏՄ երկրների ագրարարային ոլորտի գիտնականների կողմից: Մասնավորապես՝ Ա. Վովնան, Ա. Լոկաշան և Ն. Պետրովան նշում են. «Ներկայումս, երբ մսամթերքի ռուսական սպառողական շուկան ապրանքների ծավալների և տեսականու պակաս չի զգում, մսամթերքի որակը առանձնահատուկ նշանակություն ունի: Ապրանքի որակի բարելավման ամենակարևոր գործիքը առևտրային ձեռնարկությունների և սպառողի միջև հետադարձ կապի ստեղծումն է, որի օգնությամբ հավաքագրվում է տեղեկատվություն գնորդի արձագանքի և գնված ապրանքից նրա գոհունակության աստիճանի մասին»[1]: Հետադարձ կապի կարևորությունը շեշտադրում են նաև ԵՄ երկրներում: Դեանա Օլնեյը, Աուլո Ջելին, Նեհա Կումարը, Հարոլդ Ալդեռմանը և Ահմեդ Ռազան առանձնահատուկ կարևորում են կանանց և երեխաների շրջանում մսի և մսամթերքի անասնաբուժասանիտարական անվտանգության պահանջները[2]:

ԱՊՀ երկրների շրջանում գյուղատնտեսական արտադրանքների իրացման առավել արդյունավետ համակարգ է գործում Բելառուսում: Այստեղ անցումը շուկայական կառուցակարգերին կատարվում է աստիճանաբար, և դեռևս պահպանվում են խորհրդային համակարգի առավել կենսունակ ու արդյունավետ ձևերը: Իհարկե, դրան նպաստում են նաև գյուղատնտեսական ձեռնարկությունների կոոպերացիայի սկզբունքով տնտեսավարման առավելությունները: Այդուհանդերձ, այստեղ հակադրվում են շուկայահանման ավանդական և ազատական ձևերը, ըստ որի՝ ի հայտ է գալիս նոր, արդիական ենթակառուցվածքների ու կառուցակարգերի ներդրման հրամայականը: Բելառուսի պետական ագրարային տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Ն. Կիրիենկոն արձանագրում է. «Մեր երկրում գյուղատնտեսական արտադ-

---

[1] **Вовна А.В., Локша А.В., Петрова Н.И.**, О роли обратной связи потребителей и торговых предприятий, реализующих мясную продукцию // Торгово-экономический журнал. Том 5, № 2, 2018. doi: 10.18334/tezh.5.2.39409, https://1economic.ru/lib/39409

[2] Տե՛ս **Olney D. K., Gelli A., Kumar N., Alderman H., Go A., Raza A.,** Social assistance programme impacts on women's and children's diets and nutritional status, https://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/mcn.13378

ռանքի իրացման ժամանակ առաջացող հիմնական խնդիրները պայմանավորված են տնտեսավարող սուբյեկտների շուկայավարման ներուժի անբավարար մակարդակով, ազգային ագրոարդյունաբերական համալիրում լոգիստիկ կառույցների դանդաղ ձևավորմամբ, շուկայավարման ենթակառուցվածքի մի շարք մասերի բացակայությամբ: Ուստի մենք մշակել ենք Բելառուսի ագրոարդյունաբերական համալիրում վաճառքի համակարգի բարելավման ռազմավարություն, որը հիմնված է մարքեթինգային և լոգիստիկ մոտեցումների վրա ու ապահովում է մեխանիզմներ, միջոցառումներ և ուղղություններ՝ ամրապնդելու գյուղատնտեսական արտադրանքի կողմնորոշումը՝ ապահովելու սպառողների առավելագույն բավարարվածությունը»[3]:

Բելառուսի ագրոարդյունաբերական համալիրի զարգացման վիճակը և հեռանկարները, ներառյալ արտադրանքի իրացման խնդիրները, համակողմանիորեն մշակվել են Վ. Գուսակովի կողմից. շուկայավարման և լոգիստիկ մեթոդների կիրառմամբ վաճառքի քաղաքականության ձևավորման տեսական հիմքերը կազմակերպչական մակարդակով[4]:

ՀՀ շուկայում տավարի մսի գինը որոշակի կախվածություն ունի Ռուսաստանի շուկայի գներից, որոնց հետազոտությամբ զբաղվել է Մոսկվայի Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի առևտրային քաղաքականության ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր Վյաչեսլավ Չեգլովը: Մասնավորապես՝ տնտեսագետը կանխատեսեց 2024 թվականին մսի թանկացումը, որը պայմանավորված է ռուբլու փոխարժեքով, ինչպես նաև թանկարժեք վարկերով[5]:

ՀՀ-ում այս խնդիրներին անդրադարձել են Է. Ղազարյանը, Հ. Ծպնեցյանը, Ս. Ավետիսյանը, Ա. Ոսկանյանը, Վ. Ուռուտյանը, Հ. Ջավադյանը, Ս. Հովհաննիսյանը և ուրիշներ: Գյուղատնտեսական արտադրանքների իրացման գործող համակարգի վերաբերյալ Ա. Ոսկանյանը նշում է. «ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման համար ստեղծված տնտեսական միջավայրն ու պայմանները մինչև օրս չեն ապահովել ապրանքային շղթաների մեջ ընդգրկված սուբյեկտների շահերի համարժեքությունը, մթերքների որակի անվտանգության նկատմամբ կայուն վերահսկողությունն ու վստահությունը, սպառողների և արտադրողների (գյուղացիական տնտեսություններ) միջև կապի հարակայունությունը, ոլորտում ձևավորվող ավելացված արժեքի բաշխման արդարացի մեխանիզմների կիրառումը և այլն»[6]: Պրոֆեսոր Ս. Ավետիսյանը կարևորում է գյուղատնտեսական արտադրանքների շուկայահանման տարբեր ձևերի կիրառումը և «արտադրող – սպառող» հարաբերությունների կատարելագործումը: Հատկապես շեշտադրվում է պայմանագրային հիմունքներով և նախնական պատվերով իրացումը: Խոսքը վերաբերում է հատկապես տեղական, բարձր համային հատկանիշներ ունեցող պարենի իրացմանը:

---

[3] **Киреенко Н.,** Стратегия совершенствования и перспективы развития системы сбыта в АПК Беларуси, «Аграрная экономика», 4/2020.

[4] Տե՛ս **Гусаков В. Г.,** Механизм рыночной организации аграрного комплекса: оценка и перспективы / В. Г. Гусаков. Минск: Беларус. навука, 2011, 363 էջ:

[5] Տե՛ս Экономист оценил подорожание мяса в России в 2024 году, Национальное аграрное агентство, https://rosng.ru/post/ekonomist-otsenil-podorozhaniye-myasa-v-rossii-v-2024-godu

[6] **Ոսկանյան Ա., Հովհաննիսյան Ս.,** Գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման հնարավորություններն ու հեռանկարները ՀՀ-ում, https://arar.sci.am/dlibra/publication/291712/edition/267834/content

Ահավասիկ, լոլիկի մեծ պահանջարկ վայելող սորտերի բերքի իրացման համար առաջարկվում են արտադրողի և սպառողի համագործակցության քաղաքակիրթ ու արդյունավետ ձևեր: Այսպես՝ Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի (ԲՏՄԳԿ ՊՈԱԿ) արտադրած համային բարձր հատկանիշներ ունեցող լոլիկի իրացումը կարելի է կատարել ֆիրմային խանութների և սպառողների ընկերակցության միջոցով: «Սպառողների հետ կնքված պայմանագրին համապատասխան, ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ի համակարգմամբ, հատուկ ֆիրմային խանութից կամ առաքման միջոցով կիրականացվի նաև օրգանական լոլիկի և այլ բանջարաբոստանային մշակաբույսերի բերքի վաճառք: Կարելի է հաստատագրել, որ ընկերակցության անդամների պատվերը գերակա է, և այն բավարարելուց հետո միայն արտադրանքի մնացած քանակությունը շուկայական գներով պետք է վաճառվի այլ սպառողների: Արտադրության և իրացման կազմակերպումը, ըստ այս կառուցակարգի, նախադեպի բացակայության պատճառով սկզբնական փուլում, հնարավոր է, բախվի վստահության որոշակի պակասի և դժվարությունների: Սակայն, հրապարակային գործունեության ու արդյունավետ կառավարման շնորհիվ, դրանք արագ կերպով հաղթահարելի են»[7]: Գրեթե նույնատիպ համակարգ է առաջարկվում տավարի մսի իրացման համար, որն ավելի մանրամասն կներկայացվի այս հոդվածում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության տեսական և մեթոդական հիմքը հայրենական և օտարերկրյա գիտնականների աշխատություններն են: Այս ուսումնասիրության համար օգտագործվել են վերլուծության, համեմատության, ընդհանրացման, համադրման, վերացարկման և շատ այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել մշակելու և հիմնավորելու տավարի մսի շուկայահանման քաղաքականության բարելավման ուղղությունները:

Առցանց հարցումները եղել և շարունակում են մնալ շուկայի հետազոտության հզոր գործիք: Այս հարցումները թույլ են տալիս ուղղակի կապ հաստատել ինչպես վաճառողների, այնպես էլ սպառողների հետ և ստանալ հստակ տեղեկատվություն շուկայի վերաբերյալ: Այս մեթոդը օգնում է ոչ միայն բացահայտել շուկայի հիմնախնդիրները, այլև հավաքագրել ելակետային տվյալներ և կողմնորոշվել հետազոտության խնդիրների և ակնկալվող արդյունքների հարցերում: Համացանցից օգտվողների թվի աճը հնարավորություն է տվել հարցումներ անցկացնելու առցանց, ինչը նվազեցրել է ոլորտում «ձեռքով» հարցումների հսկայական ծախսերը: Սոցիալական ցանցերի և դրանց գործիքների աճող թիվը ընդլայնել է շուկայի հասանելիությունը՝ ապահովելով էլ ավելի մեծ լսարան: Առցանց հարցումների միջոցով բացահայտել ենք տավարի մսի սպառողների նախապատվությունները, ձևավորված առաջարկի, ապրանքի որակի, անասնաբուժասանիտարական պահանջների և գների վերաբերյալ նրանց վերաբերմունքը: Համադրության մեթոդի միջոցով առանձին բաղադրամասերի փոխադարձ ազդեցության ուսումնասիրությունը հնա-

[7] **Ավետիսյան Ս.,** Տեղական սորտերի լոլիկի արտադրության «նվազող հետագիծը», ՀՊՏՀ «Ամբերդ» տեղեկագիր, N 3, 2020, https://asue.am/upload/files/amberd/2020.3.pdf

ռավորություն է տալիս բացահայտելու երևույթի վարքագիծը: Եթե այդ բաղադրամասերից որևէ մեկը փոփոխություն է կրում, ապա դա անմիջապես ազդում է ընդհանուր վարքագծի վրա: Երևույթի ընդհանուր հատկանիշն, իր հերթին, հակադարձ կապի սկզբունքով ներգործում է առանձին բաղադրամասերի վարքագծի վրա: Վերլուծության և համադրության մեթոդների միջոցով բացահայտվել են շուկայի իրավիճակի փոփոխման օրինաչափությունները:

Վերլուծություն: Սննդամթերքի անվտանգության և սպառողների առողջության պահպանման առումով խիստ կարևորվում է մսի սպանդային մորթը: Դա անժխտելի է, և դրա անհրաժեշտությունն ընդունում են ինչպես արտադրողները, այնպես էլ սպառողները: Սակայն ավելի քան երկու տասնամյակ ՀՀ-ում գործադրված ջանքերը արդյունք չեն տալիս, և մինչև այսօր դժվար հաղթահարելի խնդիր է դարձել սպանդանոցային մորթի համատարած կազմակերպումը: Ինչո՞վ են պայմանավորված այդ խնդրի լուծման բարդությունները, և որ հատվածում է, որ չեն բավարարում պետական լիազորված մարմնի և տեսչական հսկողության լիազորությունները: Այս հարցերին պատասխանելու համար շեշտադրենք ԽԵԱ-ի համատարած սպանդանոցային մորթին խանգարող պատճառները: Նախ՝ ՀՀ-ում ավելի քան 340 հազ. ընտանեկան գյուղացիական տնտեսություն կա, որոնք ունեն շուրջ 501,9 հազ. խոշոր եղջերավոր կենդանի: Դրանցից ընդամենը 4,3 հազ. գլուխն է պատկանում առևտրային կազմակերպություններին, իսկ մնացածը ընտանեկան տնտեսությունների սեփականությունն է (աղյուսակ 1)[8]: Մինչդեռ, 2024 թվականի տարեսկզբին ՀՀ-ում եղել է 92–100 սպանդանոց, որոնց միայն կեսն է գործող: Այդ սպանդանոցները հիմնականում տեղաբաշխված են գյուղացիական տնտեսություններից, միջին հաշվով, 30–40 կմ հեռավորության վրա, և անասունը սպանդանոց հասցնելը զգալի ծախս է պահանջում: Երկրորդ՝ թույլ է անասնատիրոջ և սպանդանոցի անձնակազմի փոխադարձ վստահությունը: Երրորդ՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) և Կենդանիների հաշվառման ու համարակալման (ԿՀՀ) ծրագրի պահանջները խախտվում են սպանդանոցային մորթը շրջանցելու պայմաններում: Ուստի, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2023 թ. դեկտեմբերի 6-ից պետական վերահսկողության ընթացքում ոչ սպանդանոցային մորթի արդյունքում ստացված կենդանական ծագման հումք և մթերք հայտնաբերելու դեպքում կասեցվելու է ամբողջ խմբաքանակի իրացումը, միաժամանակ կայացվելու է խմբաքանակի առգրավման և ոչնչացման որոշում: Ոչ սպանդանոցային մորթի արդյունքում ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի ոչնչացման հետ կապված ծախսերը կատարվում են տնտեսավարող սուբյեկտի միջոցների հաշվին, իսկ նրա՝ ծախսերը կատարելուց հրաժարվելու պարագայում՝ լիազոր մարմնի կողմից՝ հետագայում գանձումը դատական կարգով իրականացնելու միջոցով[9]:

---

[8] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2023 թվական, էջ 375: https://armstat.am/file/doc/99541108.pdf

[9] Տե՛ս ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=183523

Խիստ կարևորվում է, որ վաճառվող թարմ միս-մսեղիքը ուղեկցվի դրա սպանդանոցային ծագումը հավաստող անասնաբուժական Ձև 5 վկայականով, միսը պետք է նույնականացվի (պետք է համընկնեն մսի վրայի դրոշմակնիքի և Ձև 5 վկայականի հերթական համարները): Կտրատված և սառնարան-ցուցափեղկում դրված միսը պետք է ներկայացված լինի տեղեկատվական թերթիկով (այն պետք է նույնական լինի Ձև 5 վկայականի և մսի դրոշմակնիքի հետ): Այս պահանջները չկատարելու և սպանդանոցային մորթից խուսափելու նպատակով անասնատերերը և մսի առևտրով զբաղվողները դիմում են տարբեր հանցավոր քայլերի: Դրանցից ամենատարածվածը կեղծ Ձև 5 վկայականի ձեռքբերումն է:

Աղյուսակ 1

Խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը և անասնաբուծական հիմնական արտադրանքի արտադրությունը*

Ցուցանիշներ	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը ԽԵԱ, հազ. գլուխ	571,9	579,3	613,4	559,6	501,9
այդ թվում՝ կովեր	254,0	251,7	265,8	246,1	222,1
Միս սպանդային քաշով, հազ. տոննա	107,3	107,7	110,6	103,2	-
այդ թվում՝ տավարի և հորթի	68,1	68,6	69,4	65,6	-
ոչխարի և այծի	10,7	10,8	10,8	10,8	-
խոզի	16,1	15,7	15,8	14,9	-
թռչնի	12,4	12,6	14,6	11,9	

* Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am/file/doc/99541108.pdf

Չորրորդ՝ գյուղատնտեսական կենդանիների շարժի և առողջության հսկողության համար առանձնահատուկ կարևորություն ունեն ՀՀ-ում կենդանիների համարակալումն ու հաշվառումը: Տարիներ շարունակ քննարկումներից հետո, վերջապես, 2022 թ. սկսվել է այս կարևոր ծրագրի կենսագործումը: Այն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (ԱԳԶԿ)՝ CARD հիմնադրամի միջոցով, որին աջակցում է Ավստրիական զարգացման գործակալությունը: ՀՀ էկոնոմիկայի նախարարի ներկայացրած տվյալներով, ԽԵԱ-ի մասով, 2022 թ. 163 հազ. գլխի համարակալում և հաշվառում է իրականացվել, 2023 թվականին՝ 428 հազ. գլխի, իսկ հաջորդ տարիներին նախատեսվում է յուրաքանչյուր տարի 195 հազ. գլխի համարակալում և հաշվառում[10]: Ինչպես երևում է բերված տվյալներից, գլխաքանակը տարեցտարի նվազում է, քանի որ հետագայում ավելի շատ ուշադրություն է դարձվում նորածին և դուրս գրվող կենդանիներին: Ծրագրի իրականացման ժամանակահատվածը մինչև 2025 թ. մայիսի 31-ն է: Այս ծրագրի իրագործմամբ ձևավորվող համակարգը կարող է զգալիորեն բարելավել հիվանդությունների բռնկումների և սննդի անվտանգության միջադեպերի կառավարումը, պատվաստումային ծրագրերը, անասունների տոհմային հատկանիշները, իսկ ամենակարևորը՝ հսկողությունը վաղ արձագանքման և ծանուցման համակարգերի գործունեության նկատմամբ: Դրանք կարող են բարելավել նաև կենդանիների տեղաշարժի վերահսկումը,

[10] Տե՛ս ՀՀ Կառավարության 2024 թ. մայիսի 30-ի նիստի նյութեր:

զննումը, հավաստագրումը, անասնաբուժական դեղերի, կերերի և թունաքիմիկատների օգտագործումը, կենդանիներին և կենդանական ծագման մթերքներին սպառնացող ռիսկերի հետագծելիությունը[11]:

Բոլոր վերը նշված գործոնները էական ազդեցություն կունենան տնտեսական զարգացման վրա՝ ստեղծելով նոր առևտրային հնարավորություններ, ինչպես նաև կբարելավեն արտադրության որակը, կենդանիների մթերատվությունը, ֆերմայի եկամուտները, կխթանեն կենդանական ծագման մթերքների արտահանումը և կնպաստեն սպառողների առողջության պահպանման հիմքերի ձևավորմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մսի շուկայի հետազոտության համար առանձնահատուկ կարևորություն ունի սպառողների վարքագծի ուսումնասիրությունը և հետադարձ կապի ապահովումը: Ահավասիկ, առանձնացրել ենք ամենակարևոր հարցերը, դրանց հավանական պատասխանները, անցկացվել է առցանց հարցում 112 հարցվողների հետ: Հարցերի առաջին խումբը վերաբերում է հարցվողի տարիքին, սեռին, կրթությանը, զբաղմունքին, ընտանեկան դրությանը և եկամտի չափին: Հարցվողների հիմնական խումբը 26-ից 55 տարեկաններն են (92%), որոնց 42,9%-ը 36-ից 45 տարեկան ամենավճարունակ խմբում են: Հարցվածների մոտ 65%-ն ամուսնացած է, 58%-ը երեխաներ ունի, սպառողների 16,1%-ն ապրում է միայնակ՝ առանց ընտանիքի: Այս բաշխումը մոտ է սննդամթերքի շուկայում սպառողների ընդհանուր դիմանկարին: Հարցվածների 79,5%-ը իգական սեռի ներկայացուցիչ է, ինչը կապված է կանանց ավելի մեծ ակտիվության հետ թե՛ հարցումներ կատարելիս, թե՛ սպառողական շուկայում: Հարցումը ցույց է տվել, որ հարցվածների ուղիղ կեսն ամեն օր միս է օգտագործում, և միայն 1,8%-ն է, որ չի օգտագործում միս և մսամթերք: Ընդ որում, հարցվածների 4,5%-ն իրեն համարում է վեգան կամ բուսակեր: Արտադրողների համար կարևոր է իմանալ, որ հարցվածների 11,6%-ին դուր չի գալիս շուկայում առկա ընտրությունը: Հարցվողները նշում են շուկայում առկա ապրանքների լայն ընտրանի, ինչը թույլ է տալիս բավարարել ցանկացած սպառողի կարիքները: Ընդ որում, նրանց ավելի քան 40%-ը նախընտրում է գնել փորձարկված ապրանքներ (պահպանողական են), իսկ 20%-ը, չնայած լայն տեսականու առկայությանը, ոչինչ չի կարողանում ընտրել: Հարցվածների ավելի քան 80%-ը խոստովանում է, որ մսի թարմության և անվտանգության վերաբերյալ բավարարվում է արտաքին տեսքի զննությամբ և վաճառողի բանավոր հավաստումով: Այսինքն՝ ՍԱՏՄ-ի մասնագետների և անմիջական սպառողի մոտեցումները տարբեր են: Մինչդեռ, անմիջական սպառողի հետևողականությունը և պահանջկոտությունը պետք է նպաստեն սպանդի և վաճառքի կանոնների պահպանմանը:

CARD հիմնադրամը, օգտվելով միջազգային փորձից և խթանելով տեղական արտադրողների նախաձեռնությունները, նպաստավոր կազմակերպատնտեսական պայմաններ է ստեղծում ինչպես ԿՀՀ ծրագրի, այնպես էլ կենդանիների սպանդանոցային մորթի կազմակերպման արդիական համակարգի ներդրման համար: Այդպիսի նախաձեռնության լավագույն օրինակ է Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Քարաձոր բնակավայրում գործող

[11] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում, http://card.am/hy/categories/3/projects/26

Հակոբ Կարապետյանի գյուղացիական տնտեսությունը և սպանդանոցը: Դեռևս 1995 թ-ից, նախկին կոլտնտեսության անգործության մատնված անասնապահական ֆերման վերականգնելով, Հ. Կարապետյանը զբաղվում է տավարի մսի արտադրությամբ: Ընդ որում, համագործակցելով CARD հիմնադրամի հետ, նա նոր տեխնոլոգիաներով ու կազմակերպական ձևերով զարգացնում է արտադրությունը: Դրա լավագույն օրինակներից է 2004 թ. CARD հիմնադրամի աջակցությամբ և համագործակցությամբ ներդրված կենդանիների բացօթյա պահվածքի ծրագիրը: Ծրագրի ամփոփումը ցույց տվեց, որ ստացված արդյունքները, մասնավորապես՝ կենդանիների քաշաճը և կերահատուցման գործակիցը, գոհացուցիչ են: Առավել օրինակելի ու հաջող է ԽԵԱ-ի բտման և սպանդանոցային մորթի ծրագիրը: Վերջինիս դեպքում կիրառվում է ոչ թե ուղղակի ֆերմերից շուկա, այլ միջանկյալ բտման և սպանդանոցային մորթի սխեման (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Տավարի մսի իրացման գործող և սպանդանոցային մորթով միջնորդավորված սխեմա****

Այս սխեմայով տավարի մսի արտադրությունն ունի մի շարք առավելություններ և կարող է կիրառվել ընտանեկան գյուղացիական տնտեսությունների պայմաններում տավարաբուծության զարգացման համար: Առաջին կարևոր առավելությունն այն է, որ ամեն տարի տարածաշրջանի գյուղերի ավելի քան 200 տնտեսավարողներից մթերում է տարբեր սեռատարիքային խմբի պատկանող կենդանիներ: Այնուհետև կազմակերպվում են դրանց բտումը և սպանդային մորթը: Երկրորդ՝ մթերված անասունները ենթարկվում են հաշվառման, համարակալման և մշտական անասնաբուժական հսկողության: Տնտեսությունը սպասարկում է մարզային ՍԱՏՄ-ի մասնագետը, և մորթն իրականացվում է սանիտարահիգիենիկ պահանջների կատարմամբ: Մոտակայքում գտնվող սուպերմարկետների ու ռեստորանների առումով, տնտեսությունն ունի պատվիրատուների լայն ցանց, և մորթն իրականացվում սպառողների պատվերով:

Ինչպես նկատում ենք, Հ. Կարապետյանի ֆերմայի հետ կապված, ստեղծվել է տավարի մսի բտման և շուկայահանման այնպիսի համակարգ, որը նպաստում է համագործակցող գյուղացիական տնտեսությունների տավարի իրացմանը և պահպանում է անասնաբուժասանիտարական ու սննդամթերքի անվտանգության կանոնները: Այս տնտեսության հիմնական առավելությունը

* Գծապատկերը մշակել են հեղինակները:

մասնագիտացումն է, որի շնորհիվ ձեռք է բերել մրցակցային առավելություններ: Իհարկե, այդ ձեռքբերումների համար էական նշանակություն ունի նաև CARD հիմնադրամի տեխնիկական աջակցությունը: Պետք է շեշտադրել, որ մսացու տավարի մթերման, բտման, սպանդային մորթի և իրացման այս արդյունավետ սխեման, որպես առաջավոր փորձ, պետական աջակցությամբ հանրապետությունում տարածման անհրաժեշտություն ունի և արժանի է ուշադրության:

Տավարի մսի արտադրության բավականին փորձարկված ու արդյունավետ ձև է նաև բացօթյա պահվածքի և արոտային բտման եղանակով բուծված տավարի սպանդային մորթն ու իրացումը: Այս գործելաոճը առավել ընդունված է բնական արոտների համեմատաբար մեծ տարածքներ և անասուններին հեռագնա արոտներ փոխադրելու հնարավորություններ ունեցող բնակավայրերի անասնապահների կողմից: Որպես կանոն, նախապատվությունը տալով ԽԵԱ-ի ձմեռային և վաղ գարնանային ծնին, գյուղացիները խոշորի մատղաշը կենդանի քաշով վաճառում են արոտային պայմաններում տավարի բտման գծով մասնագիտացված անասնապահներին: Վերջիններս 5–6 ամիս արոտային բտումից հետո, սեփական կամ գործընկերոջ սպանդանոցում, սահմանված նորմերով կազմակերպում են մորթը և միսը հանում են շուկա:

Այս սխեմայով մսի արտադրությունը հատկապես բարձր ցուցանիշներ է ապահովում ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում և այլ երկրներում: Առավել համակարգված ու դասական օրինակ է Արգենտինայի ԽԵԱ-ի մսի արտադրության արժեշղթան: Այս երկիրը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում տավարի մսի համաշխարհային շուկայում: Տավարի միս արտահանողների մեջ Արգենտինայի մասնաբաժինը շուրջ 31% է[12]: Այս երկիրը հարուստ է արոտային տարածքներով, և խոշոր եղջերավոր անասունները բտվում են հիմնականում արոտային պայմաններում, բացօթյա և շուրջօրյա արածեցման եղանակով: Կենդանիների յուրաքանչյուր սեռատարիքային խումբ արածում է իր դաշտում՝ յուրաքանչյուր տարիքի համար յուրահատուկ խոտաբույսերով: Բացի այդ, կենդանիները ստանում են բնական սննդային հավելումներ՝ հնդավորների և հացահատիկի տեսքով: Արգենտինայի տարածքում կա երեք աշխարհագրական գոտի՝ արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն: Այս շրջանների մեծ մասում արոտավայրերում ցանվում է անհրաժեշտ խոտ, և անասունները կարող են արածել ամբողջ տարին:

Անասունների առողջությունը գտնվում է անասնաբուժական խիստ հսկողության ներքո: Բոլոր կենդանիները պատվաստվում են ըստ տարիքի: Այստեղ գերադասում են ավելի քիչ հակաբիոտիկներ օգտագործել՝ այդպիսով կանխելով հակաբիոտիկների նկատմամբ կայուն բակտերիաների առաջացումը:

Անասնաբույծների ընկերակցությունները զգալի կշիռ ունեն երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում: Նրանք լուրջ ջանքեր են գործադրում շուկայում մսի գնի կտրուկ տատանումները կանխելու և մրցակցային առավելությունները պահպանելու համար: Այնպես որ՝ Արգենտինայում յուրաքանչյուր անասնաբույծ կարող է իրեն վստահ զգալ ներքին շուկայում,

[12] Տե՛ս Технология «умного животноводства» — секрет аргентинских фермеров, https://www.vetpress.ru/jour/article/view/268

բացի այդ, տավարի մսի բոլոր արտադրողները հնարավորություն ունեն մուտք գործելու միջազգային շուկա[13]:

Եզրակացություններ: Այսպիսով՝ ՀՀ-ում տավարի միսը ամենապահանջված արտադրանքներից մեկն է: Այս մսամթերքի տարեկան սպառումը 2020–2022 թթ. միջին տվյալներով կազմել է 26.1 կգ: Համեմատության համար նշենք, որ 2022 թ. խոզի մսի սպառումը մեկ շնչի հաշվով եղել է 11,7, ոչխարի, այծի մսինը՝ 4,0, իսկ թռչնի մսինը՝ 19,9 կգ: Այսպիսի մեծ պահանջարկ ունեցող արտադրանքի արտադրությունը և շուկայահանումը պահանջում է տեխնոլոգիական և սանիտարահիգիենիկ առանձնահատուկ պայմաններ, որոնք վերահսկվում են ՍԱՏՄ-ի կողմից: ՀՀ-ում հատկապես կարևորվում է ԽԵԱ-ի մորթի պայմանների և տեխնոլոգիաների պահպանությունը: Գաղտնիք չէ, որ մսեղիքի մեծ մասը ինչպես շուկա, այնպես էլ հասարակական սննդի օբյեկտներ է հասնում բակային մորթի միջոցով: Վերջին տարիներին, Իրան և արաբական երկրներ գառան մսի արտահանման ծավալների ավելացմամբ պայմանավորված, «հալալ» մորթի համար ՀՀ-ում շահագործվում են մեկ-երկու մասնագիտացված սպանդանոցներ: Իսկ տնային տնտեսություններում օգտագործման համար սեփական անասունների մորթը, առավել ևս՝ ծիսակարգային մորթը (մատաղ), հիմնականում ՍԱՏՄ-ի հսկողությունից դուրս է:

Հոդվածում ներկայացվող բտման և սպանդանոցային մորթի միջանկյալ տարբերակով մսացու տավարի իրացման սխեման, իր պարզությամբ ու մատչելիությամբ հանդերձ, նաև շատ արդյունավետ է: Մի կողմից՝ այն նպաստում է աշխատանքի բաժանման և կոոպերացիայի զարգացմանը, մյուս կողմից՝ սննդամթերքի անվտանգության հսկողության, կենդանիների հաշվառման և համարակալման, շուկայի պահանջարկի, ռիսկերի կառավարման, արտադրանքի թարմության ու որակի պահանջների պահպանմանը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև մսացու անասունները մասնագիտացված անասնապահներին արոտային բտման և բացօթյա պահվածքի հանձնելու տարբերակը: Այս դեպքում առավել լիարժեք ու արդյունավետ են օգտագործվում արոտավայրերը, իսկ վարելահողերը, կերային մշակաբույսերի փոխարեն, հատկացվում են առավել բարձր եկամուտ ապահովող մշակաբույսերի մշակությանը:

Հոդվածում ներկայացված երկրների (Արգենտինա, Ուրուգվայ, ԱՄՆ, Կանադա և այլն) փորձը, հերթափոխային արածեցման, արոտավայրերի ջրարբիացման և մշտական բարելավման դեպքում, հաջողությամբ կարելի է կիրառել ՀՀ Լոռու, Տավուշի, Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի ցածրադիր գոտիներում:

[13] Տե՛ս նույն տեղը:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», https://www.arlis.am/documentview.aspx?docid=183523
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/file/doc/99541108.pdf
3. Ոսկանյան Ա., Հովհաննիսյան Ս., Գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման հնարավորություններն ու հեռանկարները ՀՀ-ում, https://arar.sci.am/dlibra/publication/291712/edition/267834/content
4. Ավետիսյան Ս., Տեղական սորտերի լոլիկի արտադրության «նվազող հետագիծը, ՀՊՏՀ «Ամբերդ» տեղեկագիր, N 3, 2020 թ., https://asue.am/upload/files/amberd/2024-year-3/6.pdf
5. Հովհաննիսյան Ս., Մսի շուկայի ներկա վիճակը և զարգացման հիմնախնդիրները Հայաստանում, https://arar.sci.am/dlibra/publication/295250?language=hyw
6. Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում, http://card.am/hy/categories/3/projects/26
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2023, էջ 375, https://armstat.am/file/doc/99541108.pdf
8. Вовна А.В., Локша А.В., Петрова Н.И., О роли обратной связи потребителей и торговых предприятий, реализующих мясную продукцию // Торгово-экономический журнал. Том 5, №2, 2018, https://1economic.ru/lib/39409
9. Olney D. K., Gelli A., Kumar N., Alderman H., Go A., Raza A., Social assistance programme impacts on women's and children's diets and nutritional status, https://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/mcn.13378
10. Киреенко Н., Стратегия совершенствования и перспективы развития системы сбыта в АПК Беларуси, «Аграрная экономика», 4/2020.
11. Гусаков В. Г., Механизм рыночной организации аграрного комплекса: оценка и перспективы. Минск: Беларус. навука, 2011, 363 с.
12. Технология «Умного животноводства» – секрет аргентинских фермеров, https://www.vetpress.ru/jour/article/view/268?locale=ru_RU
13. Национальное аграрное агентство, Экономист оценил подорожание мяса в России в 2024 году, https://rosng.ru/post/ekonomist-otsenil-podorozhaniye-myasa-v-rossii-v-2024-godu

САМВЕЛ АВЕТИСЯН
Старший эксперт научно-исследовательского центра «Амберд» АГЭУ, доктор экономических наук, профессор

АШОТ АВЕТИСЯН
Преподаватель финансово-экономического колледжа АГЭУ, кандидат экономических наук, доцент

Рынок говядины и организационно-экономические проблемы убоя крупного рогатого скота в Армении. – Одной из проблем развития сельского хозяйства Армении является регулирование рынка говядины. Это становится сложно по ряду причин. Прежде всего, до сих пор не решена проблема учета и нумерации животных, имеющая важное значение для воспроизводства стада КРС и племенной работы. А они очень важны для соблюдения правил пищевой безопасности при реализации говядины. Этот вопрос стал более актуальным после принятия Национальным Собранием РА закона «О внесении изменений в закон о государственном контроле за безопасностью пищевых продуктов», согласно которому в 2023 г. с 6 декабря в ходе государственного контроля при обнаружении сырья и продуктов животного происхождения, полученных в результате несанкционированного убоя, реализация всей партии будет приостановлена, и одновременно будет принято решение конфисковать и уничтожить партию. Последнее создало серьезные трудности для производителей и продавцов, поскольку существуют значительные препятствия в плане реализации закона. Эта проблема вызвана также несовершенством организационно-экономических отношений системы «производитель-потребитель». Поэтому рекомендуется отдавать предпочтение промежуточному звену, выполняющему функции заготовки, интенсивного кормления и убоя между отдельными скотоводами и мясниками, опыт которых достаточно эффективен.

В данной статье раскрываются трудности реализации говядины, представлены существующие проблемы и возможные пути их решения на примере международного опыта.

Ключевые слова: *безопасность пищевых продуктов, убой, говядина, рынок, закон, продажа, регулирование*
JEL: Q13, Q18, L66
DOI: 10.52174/29538114_2024.2-106

SAMVEL AVETISYAN
Senior expert of ASUE "Amberd" research center,
Doctor of Economics, Professor

ASHOT AVETISYAN
Lecturer of ASUE Financial and Economic College,
PhD in Economics, Associate Professor

Beef Market and Organizational and Economic Problems of Cattle Slaughter in Armenia.– One of the problems in the development of agriculture in Armenia is the regulation of the beef market. This becomes difficult for a number of reasons. First of all, the problem of recording and numbering animals, which is important for the reproduction of the cattle herd and breeding work, has not yet been fully resolved. And they are very important for compliance with food safety rules when selling beef. This issue has gained greater relevance following the adoption of amendments to the "Law on State Control over Food Safety" by the RA National Assembly. Under these amendments, beginning on December 6, 2023, any detection of raw materials or animal-origin products resulting from unauthorized slaughter will lead to the suspension of the sale of the entire batch, accompanied by a decision to confiscate and destroy it. These measures have posed significant challenges for producers and sellers, as there are significant obstacles to implementing the law. The problem also stems from the imperfections in the organizational and economic relationships within the "producer-consumer" system. To address these challenges, it is recommended to establish an intermediary link that handles procurement, intensive feeding, and slaughtering between individual cattle breeders and butchers.

The present paper reveals the difficulties of selling beef, identifies existing issues, and explores potential solutions by drawing on international experience.

Keywords: *food safety, slaughter, beef, market, law, sale, regulation*
JEL: Q13, Q18, L66
DOI: 10.52174/29538114_2024.2-106